

## Հաշվետնվություն

### ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության կողմից 2017 թվականի ընթացքում կատարված աշխատանքների և 2018 թվականին նախատեսված աշխատանքների վերաբերյալ

ՏԻ և ՀԳՄՀ վարչությունն իր գործառույթներն իրականացնում է մարզպետի կողմից հաստատված կանոնադրությամբ, որի պահանջներից ելնելով՝ աշխատակիցների միջև կատարվել է աշխատանքի բաշխում և վարչության լիազորությունների լիարժեք կատարում:

2017 թվականի ընթացքում 72 համայնքային ծառայողների համար կազմվել է ժամանակացույց ատեստացիա նշանակելու վերաբերյալ, 51 թափուր պաշտոնների համար հայտարարվել են մրցույթներ, որոնք տեղադրվել են azdarar.am, aragatsotn.mtad.am կայքերում արդյունքում 37 պաշտոն համալրվել է, 1 պաշտոնի համար մրցույթին դիմած քաղաքացին չի համապատասխանել պաշտոնին, 13 թափուր պաշտոնների համար հայտեր չեն ներկայացվել:

Մրցույթների կայացման և ատեստավորման մասին յուրաքանչյուր ամսվա սկզբում տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, իսկ ամսվա վերջում տեղեկատվություն է ներկայացվում մրցույթների և ատեստավորման արդյունքների վերաբերյալ:

2017 թվականի ընթացքում կազմվել է մարզպետի որոշման 6 և կարգադրության 7 նախագիծ: ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներից մարզպետարան է առաքվել ավագանու 2331 որոշում, որից 437 որոշում չի համապատասխանել օրենսդրության պահանջներին և հետ է ուղարկվել:

Մեծ աշխատանքներ են տարվել, որպեսզի համայնքները ավագանու որոշումները մարզպետարան առաքեն 7-օրյա ժամկետում:

Յուրաքանչյուր ամսվա վերջում մարզպետարան առաքված և հետ ուղղարկված ավագանու որոշումների վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

2017 թվականի ընթացքում նախարարություններից և այլ գերատեսչություններից, հասարակական կազմակերպություններից ՏԻ և ՀԳՄՀ վարչություն մուտք եղած գրությունների թիվը 371 է: Համայնքներին վերաբերող բոլոր հանձնարարականների համար կազմվել է 47 շրջաբերական և առաքվել է համայնքներ:

Վարչական հսկողություն է իրականացվել մարզի 41 համայնքներում: Բացի պլան-գրաֆիկով նախատեսված համայնքներից վարչության կողմից մարզպետի կարգադրությունների համաձայն ուսումնասիրություններ են կատարվել ևս 7 համայնքներում՝ կապված ՀՀ Արագածոտնի մարզային քննչական վարչությունում քննվող քրեական գործերի հետ: Կազմվել են համապատասխան ուսումնասիրության մասնագիտական ակտեր:

2017 թվականի ընթացքում վարչության կողմից աշխատանքներ են տարվել մարզի 8 համայնքների ղեկավարների և ավագանու 12 անդամների ընտրություններ անցկացնելու համար: Աջակցություն է ցուցաբերվել համայնքների նորընտիր ղեկավարներին հանձնում-ընդունում կատարելու ուղղությամբ:

Իրավական հսկողություն և մեթոդական օգնություն է ցույց տրվում համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից կայացված որոշումների վերաբերյալ:

Իրականացվել են մարզի համայնքապետարանների աշխատակազմերի կադրային գործի վարման և մեթոդական ղեկավարման աշխատանքներ:

Յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 7-րդ աշխատանքային օրը տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն համայնքների պաշտոնական կայքերի վարման վերաբերյալ, մարզի համայնքների ղեկավարների և ավագանու անդամների մոտ կայացած ընդունելություններին մասնակցած քաղաքացիների վերաբերյալ: Աշխատանքներ են տարվում, որ օրենքների պահանջներին համապատասխան համայնքների հնգամյա զարգացման ծրագրերը և բյուջեն պարտադիր քննարկվեն համայնքի ղեկավարին կից ստեղծված խորհրդակցական մարմնում, ինչպես նաև այդ մարմնում քննարկվեն համայնքի ղեկավարի և ավագանու որոշումները՝ ապահովելով բնակչության մասնակցությունը համայնքի կառավարմանը:

Յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող 10-րդ օրը տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն մարզի համայնքներում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում համայնքների ղեկավարների կողմից իրականացված հսկողության վերաբերյալ:

Յուրաքանչյուր կիսամյակ ՏԻ և ՀԳՄՀ վարչությունը համայնքներից հավաքագրում է համայնքների տեղեկատվական բազան՝ յուրաքանչյուր համայնքի համար բաղկացած շուրջ 400 հարցից, մուտքագրում և ամփոփ ձևով ներկայացնում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

ՏԻ և ՀԳՄՀ վարչության կողմից իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ նշանակելու, նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու և գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակելու աշխատանքները:

Պարբերաբար աշխատանքներ են տարվում և վերահսկողություն է իրականացվում 39 համայնքների հետ՝ համայնքային կառավարման և տեղեկատվական համակարգի գործունեությունը բարելավելու համար:

Ապահովում ենք մարզի համայնքների ղեկավարների մասնակցությունը մարզխորհրդի նիստերին, ինչպես նաև կազմակերպում խորհրդակցություններ տարածքներում:

Վարչության աշխատակիցները մշտական աշխատանքներ են իրականացնում համայնքների ղեկավարների հետ սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ:

ՏԻ և ՀԳՄՀ վարչության կողմից աշխատանքներ են տարվում՝ ապահովելու մարզի 10.000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում ավագանու նիստերի կամ հանրային նշանակության այլ միջոցառումների առցանց հեռարձակումը համացանցում:

2017 թվականի նոյեմբերի 5-ից հետո մարզում արդեն առկա է տեղական ինքնակառավարման նոր իրողություն, քանի որ մարզի նախկին 114 համայնքների փոխարեն գործում են 72 համայնքներ:

Համայնքների խոշորացման արդյունքում 46 համայնքներ միավորվեցին, և կազմավորվեցին խոշորացված բազմաբնակավայր 4 համայնքներ (Ապարան, Արագածավան, Ծաղկահովիտ և Ալագյազ): Համայնքների խոշորացման գործընթացը նախատեսված է շարունակել և ավարտին հասցնել 2018 թվականի ընթացքում: